



ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Չարենցի մասին

Այդ զարմանալի մարդն ավելի զգացմունքներով էր ապրում, քան գիտակցությամբ, նա իրեն պահում էր չափազանց հասարակ, հասարակ և՛ իր աշխատավայրում, և՛ փողոցում, և՛ երրորդական անհրապույր ճաշարաններում.

Չարենց -Տեսնես մեզնից ո՞վ ավելի շուտ կմեռնի, հը՞մ...

-Այդ մասի՞ն էիր մտածում,- զարմացավ Ակսելը: Իմ պապը 98 տարի է ապրել, իսկ հայրս մինչև հիմա ատամներով է ընկույզ ջարդում:

Ակնհայտ չարությամբ հարցրեց.

-Ուզում ես ասել, որ դու հարիր տարի՞ պիտի ապրես...

Ժպտաց իր խորամանկ ժպիտով. հետո մերկացրեց աջ ձեռքը մինչև արմունկը, մերկ արմունկով մի քանի անգամ խփեց սեղանին՝ ապացուցելու համար ուժը, բացականչեց.

-Տո՛ւ, փճացածնե՛ր, բնությունը ինձ ուժ է տվել, ու՛ժ, ես հազար տարի պիտի ապրեմ...

-Ինչու՞ այդպես գրեց «Երկիր Նաիրի»-ն:

-Այդպես գրվեց, ես մեղավոր չեմ:

.....

Սայաթ-Նովայի գերեզմանի մոտ

Ի՞նչ պոետ, ի՞նչ աշուղ... մեծություն՝ն է, մի զարմանալի երևույթ:

Հիդս խոսի, մի մնա խոռվի պես,

Դարդա տվիր. գյամիս տարար ծովի պես...

Կմեռնիմ, չիս տեսնի Սայաթ-Նովի պես...

-Դա՛... համ գրել է, համ եղանակ սարքել, համ երգել, համ

նվագել: *Ուղիվիտելնի* քանքար է եղել: Գնա՛նք. «*Կմեռնիմ, չիս տեսնի Սայաթ-Նովի պես...*»: Չենք էլ տեսնի:

-Ոչ մի տեղ ինձ էնպես հանգիստ չեմ գտում, որքան գերեզմանոցում: Մի վերին իմաստություն է իջնում վրա: Մտածում եմ, ո՞ր վերջը էս է ու մի տեսակ խաղաղվում եմ:

-Ինչու՞ համար գերեզմանոցում չես կարող բարձր խոսել. ա՛յ, ես ու դու համարյա շշուկով ենք խոսում: Թումանյանի՞ ց ենք վախենում, թե՞ Րաֆֆուց: Փորձիր մի գոռալ... Հազար թուման տան՝ չեմ կարա գոռալ... Ա՛յ տղա, ո՞վ հնարեց այս մահը:

Ղարսում Աբգար աղեն թե՛ արի դուքան, գործ կա... թե՛ գրող ես ուզում դառնալ, քո գործն է, բայց դե՛ մի բանով պիտի օգնե՞ս հորդ...

-Ա՛ն էս 500 չախուն, տար Թիֆլիս, ծախի ու փողերը բե. տեղս նեղ է. էս էլ քեզ ճամփի ծախս ու խաչջուխ...

Եկա, էն տունն իջա, մի պուճուր սենյակ վարձեցի... Չախունները ծախեցի...

....-Չախունների փողը...

-Ի՞նչ չախունների փող... Հա՛, չախունների փողով «Ծիածան» տպեցի... Աբգար աղի հետ՝ քվիթ...:

Ձեզ համար ի՞նչ, հեղափոխությունն ընդունեցիք դատարկ գլխով, ու գնում եք գլուխներդ ցից... Իսկ ես, ես Բրյուսովից եմ

գալիս, Բալմոնտից ու Բլոկից, Սերյոժա Եսենինից ու Մայակովսկուց...

Ձեզ համար ի՞նչ, դուք եք ու ձեր չոր գլուխը: Ես Վերհարնից եմ գալի՛ս ու Վերլենից: Արտուր Ռեմբոյի անունը լսած կա՞ս, Մաքսիմիլիան Վոլոշինի անունը լսած կա՞ս... Ձեզ համար կյանքը սապնած շոսսեի պես մի բան է, սղդալով գնում եք: Ֆրանսիական բանաստեղծ Ֆրանսուա Վիյոնի մասին գիտե՞ս, երկու անգամ բանտ է նստել...

-Ա՛յ տղա, ե՞րբ պիտի Թումանյանի նման մարդ դառնանք, լրջանանք, ծերանանք, հյուրեր, այցելուներ ընդունենք... Եվ ընդհանրապես, ե՞րբ պիտի մարդ դառնանք:

-Լա՛վ, ե՞ս եմ մեծ, թե՞ Վշտունին:

Որպես թե մտածում եմ:

-Նայած... մոտեցման:

Չդիմացավ, բարկացավ:

-Փչացած, որ բանն այդտեղ հասավ՝ ես Տերյանից էլ մեծ եմ...:

Դժգոհում էր հորից՝ «Աբգար աղայից» ամեն անգամ, երբ հայելուն էր նայում:

-Էս ի՞նչ բիչիմ տվեց ինձ: Կանայք ինձնից վախենում են: Ես ինչ ասեմ՝ Աբգար աղին ասեմ: Այ թե Վշտունու բոյ-բուսաթը կունենայի՛ :

-Ա՛յ տղա, մի հայ գրող էլ չմեռավ, որ տեսնեինք՝ ոնց են թաղում...:

.....
Խմբագրում էր տարեգիրքը:

Գործուղեց գրական թանգարան Տերյանից անտիպներ ընտրելու:

Ընտրեցի: Գրեցի չորս բանաստեղծություն և ներկայացրի Տերյանի բանաստեղծությունների հետ: Կնկատի՞ :

Աչքերը շողշողացին:

-Մի տես, կարծես այսօր գրած լինեն: Հարկավոր է շարել տալ:

Այդ մասին ես չէի մտածել:

Վերցրի բանաստեղծությունները, ջոկեցի իմիններն ու գրպանեցի:

-Ինչո՞ւ վերցրիր, տո՛ւր էստեղ:

-Սրանք իմն են:

Աչքերում ամեհի հուրեր...

-Սուկին սին, ինձ ոչ ոք միստիֆիկացիայի չէր ենթարկել:

Երեք օր չխոսեց հետ:

.....
«...Միությունից պաշտոնապես հրաժարվեց: Հրաժարականը մերժվեց:

Միությունից հեռացվեց:
Դռները ջարդելով ներս մտավ»:

«...Լազարյան ճեմարանի բակում. տխրեց:

-Տերյանը սովորել է այստեղ, այս դռնով հազար անգամ ներս ու դուրս է արել... Մենք ի՞նչ ենք նրա հետ համեմատած, խուժաններ...

-Էլ ինչու՞ գրեցիր «հաճելի է, չէ՞, ձեզ էլի Տերյանի երգը թքոտ...»

-Բա ես ինչ եմ ասում, խուժաններ ենք... Տերյանը շատ մեծ է,-սկսեց գրեթե երգել քթի տակ.-

Ոսկեհանդերձ եկար ու միգասքող,

Կապուտայա աշուն, սիրած աշուն,

Տերեւներիդ դանդաղ թափվող ոսկով,

Մետաքսներով քնքշաշրշյուն:

-Բա՞ ս... էսպես կգրեն:

«Տերյանի երգը թքոտ»,-քրթմնջացի ես:

Նա կանգնեց, հանեց գլխարկը, խփեց ծնկին, բարկացած ասաց.

-Վերջ տուր, Գուրգեն խան...

...Տիրում էր համագումարում, ջղայնանում, բարձրաձայն մտածեց.

-Չկա Բագրիցկին, չկա Մայակովսկին, չկա Սերյոժա Եսենինը...

-За то X-ը նստած է ետեւդ,-շնչաց Ակսելը: Թափով ետ դարձավ ու նայեց.

-Он не поэт, слушай, он балалайка- այ, ուրիշ բան է Պաստեռնակը,

Սելվինսկին, Սվետլովը...»:

.....
Կոմիտասս եւ ջուր

«...Տիրում էր երաժշտությունը, բայց ավելի բարձր էր գնահատում արեւելյան երաժշտությունը: Տիրում էր Կոմիտասին, Սպենդիարյանին,

Ռոմանոս Մելիքյանին: Ակսելը ճեմարանից հիշում էր Կոմիտասի երգերը, երբեմն նեղ շրջանակում Կոմիտաս էր երգում չափ տալով, չնայած որ միակ երգողն ինքն էր: Չարենցը շատ էր սիրում այդ երգերը.- Մի Կոմիտաս երգիր, Ակսել՝:

Երբեմն էլ, երբ նեղսրտում էր ու ձանձրանում, գլխարկը քաշում էր աչքերի վրա եւ երեխայի նման խնդրում.

-Գնանք Ակսելի մոտ Կոմիտաս լսենք:

Ինչպես ամեն իսկական բանաստեղծ, սիրում էր բնությունը, բայց ամենից ավելի՝ երեւի՝ ջրի խշշոցը: Ամենից շատ սիրում էր Ջանգվի ձորը: Իր սերը եւ Ջանգվի ձորն իջնելու ցանկությունը ձեւակերպում էր այսպես.

-Գնանք ջուր լսենք:

Կպառկեր գետափին, գլխարկը կդներ դեմքին եւ... «ջուր կլսեր»...»:

.....
Պատգամ

«... -Ես հերքեցի Տերյանին եւ ստեղծեցի իմ գրականությունը, բա ինչո՞ւ դուք ինձ չեք հերքում, եթե ուզում եք ձեր գրականությունն ստեղծել... Հարցն ուղղված էր մի երիտասարդ գրողի ու ինձ:

Ձեռների մեջ խշրտացրեց թագրեհը եւ մի ումպ թեյ խմեց.

-Ասենք, ես ի՞նչ խեր տեսա հերքելով, որ դուք ի՞նչ խեր տեսնեք: Ի՞նչ հերքել: Տերյանին ո՞նց կհերքես: Միսալ տպված լու՞ր, թե դիսկոուսիոն հոդված է Տերյանը, որ հերքես: Տերյանը մի ամբողջ կուլտուրա է: Կուլտուրան հերքե՞լ կլինի: Մի բան պիտի հասկանալ,-չլիներ Հովհաննես Հովհաննիսյանը, Թումանյանը Թումանյան չէր լինի, ոչ էլ Իսահակյանը՝ Իսահակյան: Իսկ եթե չլինեին Հովհաննիսյանը, Թումանյանը, Իսահակյանը՝ Տերյանը Տերյան չէր լինի: Չլիներ Տերյանը, ես՝ ես չէի լինի, եւ մի բանը լավ հասկացեք: Հիմա անցնենք ձեզ. դուք պիտի շարունակեք այնստեղից, որտեղ ես վերջացնում եմ: Կրկնելով իմ նախորդներին կամ ինձ, ոչ մի արդյունքի չեք հասնի: Պետք է առաջ անցնել, յուրացնել եւ առաջ անցնել: Նախամարդիկ իրենց ուսերին կրում էին իրենց բեռը, հետո մարդը հնարեց ձեռնասայլը, հետո՝ եզասայլը, ապա՝ կառքը, ձիաքարշը, գնացքը, ավտոն, աերոպլանը: Վա՛յ նրան, ով

հեղափոխության մեր դարում կնաստի եզասայլը: Տե՛ղ չի հասնի նա, չի՛
դիմանա ժամանակի քննությանը:

Թագրեհր նետեց գրասեղանին, նայեց մեզ իր արտահայտիչ աչքերով եւ
խորամանկ ժպտաց.

-Մեռա ձեզ խելք սովորեցնելով»:

ՎԵՐՁԵՐԳ

...Եվ գնում ես մինչև հիմա իմ ուղեղում ու հոգում, ուղեղիս փշերի ու
հոգուս ծաղիկների վրայով, դու, մե՛ծ երգիչ, մեծ ու ահավոր մեր դարի,
դու տարերայի՛ն, անհանգիստ ու ալեկո՛ծ վեհություն, պայծա՛ռ զավակ
իմ ժողովրդի, մեծ ուխտի կարմի՛ր ուխտավոր, դու նահատա՛կ ու
մարտիրո՛ս, ընկե՛ր հերոսական ու ազնի՛վ ուսուցիչ Եղիշե Չարենց...

«Չարենց-նամե» հուշագրությունից:

.....

Հրայա Ներսիսյանի մասին

Մեծ գաղտնիքը

Չարենցի հետ դիտում ենք «Ազատագրված Դոն Կիխոտ»-ը: «Դոն
Կիխոտ»-ի դերումն է Հրայա Ներսիսյանը: Չարենցն առաջին անգամ
տեսնում է նրան բեմի վրա:

Լարված հետեւում է նրա խաղին, ակնհայտ կերպով ձանձրանում, երբ
նա չկա բեմի վրա: Ահա նա հայտնվում է, եւ Չարենցը լարվում է նորից:
Երբ իջավ վերջին վարագույրը, Չարենցը շեշտակի կերպով դարձավ
դեպի ինձ եւ ասեւ

զարմացած հարցրեց.

-Տեսա՞ր...

Հետո նկատելով իմ տարակուսանքը՝ ավելացրեց.

-Դուրս գանք՝ ասեմ...

Բարձրանում ենք Աբովյանով: Նա կանգ է առնում.

-Որպես գաղտնիք քեզ պիտի ասեմ, որ Պոլսեն եկած այս երիտասարդ

Հրաչյա Ներսիսյանը շատ տաղանդավոր դերասան է...

-Քեզ բան եմ ասում, իսկական տաղանդ է:

Ապա լռեց, քայլեց մի քանի քայլ եւ նորից կանգ առավ:

-Զարմանալի քաղաք է Պոլիսը, Ադամյան, Փափազյան, Ներսիսյան...

Քսանական թվականներ:

.....

Մտերիմ խոսք՝ Հրաչյա Ներսիսյանին

Դու այստեղ չես տխրի, հավատացնում եմ քեզ, այս մենք կտխրենք առանց քեզ:

Ահա Կոմիտասը ամենահայր եւ Եղիշե Թադևոսյանը, ահա վեհաշուք ու նահապետ Աբելյանը Հովհաննես ու առյուծաբաշ Շիրվանզադեն, Իսահակյանն է այստեղ, որին շատ բան կպատմես ու դեռ Հովհաննես Հովհաննիսյանը... Հետո Չարենցը կգա Ակսել Բակունցի հետ, որոնք դեռ տեղ չեն հասել, էլ ինչու՞ դու պիտի տխրես, այդ մենք կտխրենք առանց քեզ, հավատա ինձ:

Դալար է մեր ժողովրդի մեջքը, հրաշածին ու բեղմնավոր նրա արգանդը. արվեստի բարձրադիր գահերը թափուր չեն մնա, մեր ցավն այն է, որ անժամանակ էր քո անդարձ մեկնումը...

Իսկ այնպես ի՞նչ մահ, նայիր քո շուրջը, մի՞թե դու գտնվում ես մահացածների մեջ:

Իհարկե ոչ: Իհարկե, դու այստեղ չես տխրի, մեր հին պանթեոնի նո՞ր բնակիչ, այդ մենք կտխրենք առանց քեզ:

...Դեռ երիտասարդ, թողիր դու Մարմարայի ավերը եւ խարիսխ նետեցիր քո ժողովրդի սրտում: Դու մեծացար քո ժողովրդի հետ եւ տվիր քո ողջ ստեղծագործական կրակն ու ավյունը քո ժողովրդի մեծ արվեստին:

Դու չիմացար քո մեծությունը: Զարմանու՞մ ես, որ գտնվում ես պանթեոնում: Դու գիտեիր ժպտալ քո լուսավոր կնճիռներով, մանկական

Ժպիտով: Այդ քեզ շատ էր նման:
Չփորձես քեզ նմանվել:
Չփորձես ժպտալմ երբ բոլորը լալիս են:
Քեզ լուրջ պահիր:

.....
ՎԻԼՅԱՄ ՄԱՐՈՅԱՆԻ ՀԵՏ

«Միտքս չկրցի հասկցնել...»

Գրողների տանը հանդիպումը կայացավ հանպատրաստից: Անկախ այս հանգամանքից, մթնոլորտը ջերմ էր:

-Բիթլիսցի գրող կա՞ այստեղ:
Սեղմեց ձեռքը.

-Շատ, շատ ուրախ եմ, Բիթլիս կհիշե՞ս:

-Կհիշեմ:

-Այստեղ ընտանիք ունե՞ս...

-Ունեմ, տուն, տեղ, ընտանիք:

-Ձեր տուն Բիթլիսի թթու կա՞:

-Կա:

Լռություն:

-Բիթլիս կհիշե՞ս:

Երբ դուրս եկանք, գանգատվեց.

-Չկրցի հասկցնել, որ Բիթլիսի թթու կուզեմ ուտել... Ինչ անպիտան մարդ եմ:

.....
Նրան ամեն ինչ զարմացնում է

Վիլյամ Սարոյանի հմայիչ գծերից մեկը նրա գրեթե մանկական անմիջականությունն է:

Թվում է, թե նա ծնվում է ամեն օր եւ նայում է իրերին, երեւոյթներին եւ մարդկանց՝ նոր ծնված մանկան հատուկ զարմանքով եւ թարմ աչքերով:

Նրան հավասարապես զարմացնում են ե՛ւ ցուցանակում դրված

մանկական խաղալիքները, ե՛ւ որթատունկից կախված խաղողի
ողկույզը, եւ՝ «Բաղտասար աղբարը»:
Նրան զարմացնում են մանավանդ երեխաները:
Միրում է նա մանուկներին մանկական սիրով:
Գյուղում հանդիպեց մի փոքրիկ, 8-9 տարեկան քրդուհու՝ գրկում 2-3
տարեկան քույրը:
Մոտեցավ:
-Անունդ ի՞նչ է:
-Ալմաստ:
-Ի՞նչ գեղեցիկ են, փոքրիկի անու՞նը...
-Զինե..
-Զարմանալի: Բնավ չպիտի մոռնամ:
Եւ չմոռացավ: Ամբողջ ճանապարհին եւ ավելին, հաջորդ օրերին որեւէ
առիթով եւ առանց առիթի հիշում էր.
-Ինչ զարմանալի փոքրիկներ էին: Ալմաստ եւ Զինե, շատ զարմանալի:
Բնավ չպիտի մոռնամ:

.....

«Որո՞ւն զարմացնեմ...»

Դեռ Մոսկվայում նրա սեղանի վրա տեսա իր գործերի մի քանի անգլերեն
հրատարակություններ:
-Ինչու՞ նկարդ չեն դրեր,-հարցրի:
-Հայու բեղերես կամչնան,-պատասխանեց նա կես լուրջ, կես կատակ,-
բեղերս անգլիական չեն:
Երբ Երեւանում հանդիպեցինք, ես չկարողացա չզարմանալ
սարոյանական զարմանքով...
Բեղերը կրճատել էր հիսուներեք տոկոսով:
-Զարմանալի մարդ ես,-քրթմնջացի ես,-պատվական բեղերդ բերիր
հասցրիր մինչեւ այստեղ եւ Երեւան մտար կճատ բեղերով...
-Օդո՛ւլ,-գրեթե քարկացավ նա,-ես իմ հայու բեղերով ամբքացիներուն,

Ֆրանսիացիներուն կրնամ զարմացնեն: Այստեղ, Հայաստանի մեջ որո՞ւն զարմացնեն: Հայերեն չեմ գիտեր եւ հայու բեղեր կպահեմ... Կամչնամ:

.....

Լեզվագիտական խնդիրներ

-Մի անգամ նստած տունը կաշխատեմ, կլսեմ, որ մայրս դրացի անգլուհու՝ միսիս Մերիի հետ կխոսի: Իրար ածուներեն բաներ մը ցույց կուտան, բաներ մը կխոսին. մայրս՝ հայերեն, անգլուհին՝ անգլերեն: Հետո կամաց-կամաց անոնց խոսակցությունը իջավ-իջավ ու մարեց. դուռը աղմուկով բացեց մայրս եւ ներս մտավ.

-Բարկացած կերելիս,-ըսի:

-Եւ իրավունք ունիմ բարկանալու,-ասաց մայրս,-ինչ տեսակ կին է այս մեր դրացուհի անգլուհին, երկիրը լուսավոր երկիր, ամեն տեղ գիրք, թերթ, դպրոց, ուսումնարան, քսանհինգ տարի է այստեղ կապրի, ինչու՞ հայերեն չի խոսեր...

.....

ԱԿՍԵԼՅԱՆ ՔԱՆԴԱԿՆԵՐ

...Ես հաճախ, ուշ գիշերին անցնում եմ այն տան մոտով, ուր ապրում եւ ստեղծագործում էր մեծ, անկրկնելի, եղերական Ակսել Բակունցը: Նա հիմա լեզենդ է, երգ ու էլեգիա ու փողոցից այլեւս չես տեսնի նրան իր համեստ, փոքրիկ սենյակում, նստած իր գրասեղանի մոտ, գրելիս կամ կարդալիս: Ես ուզում եմ նրան պատկերացնել վաթսուն տարեկան հասակում եւ դա ինձ ոչ մի կերպ չի հաջողվում: Ես վերջին անգամ նրան տեսա, երբ նա երեսույոթ տարեկան էր եւ այդպես էլ մնաց իմ հուշերում...

... Ու հիմա, երբ տարիների մեզ-մառախուղից հիշում եմ նրան, պատկերանում է նա ինձ իր իմաստուն, խորաթափանց հայացքով եւ մանկական իր հստակ ժպիտով: Նա էր լուսավոր հանճարը զանգեզուրյան մութ ձորերի, որոնք լուսավորված են նոր լույսերով նրա 60-ամյակի այս օրերին, երբ նա մեզ հետ է հավերժ ապրող իր թողած գրական շողշողուն ժառանգության հավերժական հարստությամբ: Մեզ

հետ է նա, հայկական լեռնաշխարհի հզորաթեւ արծիվը, սեւ ցելերի վաստակավոր սերմնացանը, մեզ հետ է նա, ինչպէս ինքն էր կոչում իրեն՝ Ալեքսանդր Բակունց, որդի Ստեփանի, ի գեղջեն Գորիս:

«Լռության ձայնը», Երեւան, 1962